Ուրվագիր հինգերորդ

Աստված՝ որպես մեր գերիշխան Բրուտը, մեզ դարձնում է Իր անոթները, Իր պարունակիչները, որպեսզի Իրեն պարունակենք

Գրվածքների ընթերցում. Երմ 18:1-10, Եսյ 64:8, Հռմ 9:15-16, 19-23, Գրծ 9:15, Բ Կրթ 4:6-7

I. Աստված՝ որպես մեր գերիշխան Բրուտը, բացարձակ իրավունք ունի մեր՝ որպես Իր կավեղենի հանդեպ. հանգուցային կարևորություն ունի այն, որ Աստծու գերիշխանության տեսություն ստանանք՝ Երմ 18:1-10, Եսյ. 64:8, Դնլ 4:3, 34-35, Հռմ 9:19-23.

Ա. Գերիշխանությունը վերաբերում է Աստծու անսահմանափակ իշխանությանը, զորությանը և դիրքին՝ Հյտ 4:11, 5:13.

1. Որպես գերիշխան Անձը՝ Աստված վեր է ամեն բանից, ամեն բանի հետևում է և ամեն բանում է՝ Գ Թգ 22:19:
2. Աստված լիովին ունակ է իրագործելու այն, ինչ ուզում է՝ ըստ Իր սրտի ցանկության և ըստ Իր հավիտենական տնտեսության՝ Դնլ 4:34-35, Եփս 1:4-5, 9-11:

Բ. Հռմ 9:19-23-ը վերաբերում է Աստծու գերիշխանությանը.

1. ««Նրա կամքին ո՞վ է դեմ կանգնում»: Բայց, ավելի շուտ, ո՛վ մարդ, ո՞վ ես դու, որ հակաճառում ես Աստծուն: Մի՞թե ծեփածոն ծեփողին կասի. «Ինչո՞ւ ես ինձ այսպես պատրաստել»»՝ խխ. 19բ-20.
   - ա. Անհրաժեշտ է գիտակցել, թե մենք ով ենք. մենք Աստծու արարածներ ենք, իսկ Նա մեր Արարիչն է՝ Եսյ 42:5:
   - բ. Լինելով Նրա արարածները՝ մենք չպետք է դիմադրենք Նրա մտահղացմանը կամ հակաճառենք Նրան՝ Արարչին՝ Հռմ 9:20:
2. «Թե՞ բրուտը կավի վրա իշխանություն չունի՝ միևնույն զանգվածից մի անոթ պատվի համար պատրաստելու, իսկ մեկ ուրիշը՝ անարգանքի»՝ խ. 21.
   - ա. Աստված մեր Բրուտն է, իսկ մենք՝ Նրա ձեռքին եղող կավը. Աստված՝ մեր Բրուտը, գերիշխան է՝ Երմ 18:1-6, Եսյ 64:8:
   - բ. Լինելով մեր Բրուտը՝ Աստված մեր հանդեպ բացարձակ իրավունք ունի. մեր առնչությամբ Նա իրավունք ունի անելու այն, ինչ ցանկանում է. եթե Աստված կամենա, մի անոթը պատվի կդարձնի, իսկ մյուսը՝ անպատվության՝ Երմ 18:6, Եսյ 29:16, 64:8, Հռմ 9:21:

Գ. Աստծու գերիշխանությունը Նրա ընտրության հիմքն է. Նրա ընտրությունը կախված է Նրա գերիշխանությունից՝ խխ. 11, 18, 11:5, 28:

II. Աստված՝ որպես մեր Բրուտը, գերիշխանորեն ստեղծել է մեզ՝ լինելու Իր անոթները, Իր պարունակիչները, որպեսզի Իր նախասահմանության համաձայն Իրեն պարունակենք՝ Բ Կրթ 4:6-7, Եփս 4:6, 3:19բ, Փլպ 2:13, Եբր 13:20-21, Ա Տմթ 3:16, Բ Տմթ 2:20-21, Եփս 1:5, 11.

Ա. Մարդուն ստեղծելու առնչությամբ Աստծու մտահղացումը մարդուն Իր անոթը դարձնելն էր, Իր հոգեղեն պարունակիչը, որպեսզի այն պարունակի Քրիստոսին և լցվի Քրիստոսով՝ որպես կյանքով, Քրիստոսի Մարմնի՝

որպես Աստծու մեծ, ընդհանրական անոթի կառուցման համար, որ Նրա արտահայտության համար է՝ Ծնդ 2:7, Գրծ 9:15, Հռմ 9:21, 23, Բ Կրթ 4:7:

Բ. Ողջ Գրվածքի հիմնական ուսուցումը պարզապես սա է. Աստված բուն պարունակությունն է, իսկ մենք՝ պարունակիչներս, որ պատրաստվել ենք պարունակությունն ընդունելու համար. մենք պետք է պարունակենք Աստծուն և լցվենք Աստծով, որպեսզի պատվի համար եղող անոթ լինենք, սրբացված, տանտիրոջը պիտանի, ամենայն բարի գործի համար պատրաստված՝ Բ Տմթ 2:20-21:

Գ. Եթե մենք Աստծուն չպարունակենք ու չճանաչենք որպես մեր պարունակության, ապա անիմաստ հակասություն կլինենք՝ Ժղվ 1:2-3, 14:

Դ. Պողոսի բոլոր տասնչորս Թղթերը կարելի է ամփոփել երկու բառով՝ բաց անոթ.

1. Աստված Իրեն այնքան կարող է բաշխել մեր մեջ, որքան մենք բաց ենք. Աստված ուզում է, որ մենք միայն սիրենք Իրեն ու մեզ Իր համար բաց պահենք՝ Դ Թգ 4:1-7, Մտթ 5:3, Հվի 1:16, Եսյ 57:15, 66:1-2:
2. Անկումայնությունը սկսվում է ինքնագոհությունից. ա- ռաջընթացը սկսվում է քաղցից ու ծարավից՝ Երկ Օր 4:25, Ղկս 1:53, Փլպ 1:25, Հյտ 3:16-18:

III. Աստված՝ որպես մեր Բրուտը, Իր գերիշխանությամբ ունի Իր ընտրածներին ու կանչածներին պատվի ու փառքի համար ողորմության անոթներ դարձնելու իշխանություն՝ Հռմ 9:11, 18, 21-24.

Ա. Աստված Իր գերիշխան ողորմությամբ ընտրել է մեզ. Աստծու ողորմությունն Աստծու հատկանիշներից ամենահեռահասն է, որ մեզ փրկում է մեր թշվառ վիճակից, հասցնում մի վիճակի, որը հարմար է Իր շնորհքի և սիրո համար՝ Եփս 2:1-4, Եբր 4:16, Մտթ 5:7, 7:1, 9:13.

1. Մեր բնական վիճակի համաձայն՝ մենք շատ էինք հեռացվել Աստծու շնորհքից, լիովին անարժան էինք Նրա շնորհքին. մենք արժանի էինք միայն Նրա ողորմությունը ստանալուն՝ Եփս 2:4:
2. Մարդու անհնազանդությունն Աստծու ողորմությանը հնարավորություն է ընձեռում, և Աստծու ողորմությունը մարդուն փրկություն է բերում՝ Հռմ 11:32:
3. Մենք ստեղծվեցինք լինելու ողորմության անոթներ՝ Քրիստոսին՝ որպես Աստծու ողորմությանը պարունակելու համար՝ 9:11-13, 16, 20-21, 23, Ողբ 3:21-24, Ղկս 1:78-79:
4. Աստծու ողորմությամբ մենք արձագանքեցինք ավետարանին, երբ ուրիշները չէին արձագանքում, ընդունեցինք Քրիստոսի՝ որպես կյանքի մասին խոսքը, երբ ուրիշները մերժում էին այն ընդունել, և բռնեցինք Տիրոջ վերականգնման ճանապարհը, երբ ուրիշները հետ էին քաշվում այս ճանապարհն ընդունելուց՝ Օրհներգ 223, 3-րդ տուն:

Բ. ««Ողորմելու եմ նրան, ում որ ողորմեմ….»: Եվ ուրեմն. ո՛չ կամեցողից է, ո՛չ էլ վազողից, այլ Աստծուց, ով ողորմածություն է ցուցաբերում»»՝ Հռմ 9:15ա, 16.

1. Մեր պատկերացմամբ՝ ով կամենում է, ձեռք է բերում այն, ինչ կամենում է ստանալ, և ով վազում է, ձեռք է բերում այն, ինչի հետևից վազում է՝ խ. 16.

ա. Եթե բանն այս լիներ, ապա Աստծու ընտրությունը կլիներ մեր ջանքի ու տքնանքի համաձայն:
բ. Ընդհակառակը, Աստծու ընտրությունն Աստծուց է, ով ողորմություն է ցույց տալիս. մենք կամենալու կամ վազելու կարիք չունենք, որովհետև Աստված ողորմում է մեզ:
գ. Եթե Աստծու ողորմությունը ճանաչենք, ո՛չ մեր ջանքին կվստահենք, ո՛չ մեր ձախողումներից կհիասթափվենք. մեր խղճալի վիճակում հույսն Աստծու ողորմությունն է՝ Եփս 2:4:

2. Եթե ուզում ենք Աստծու նորկտակարանյան տնտեսությունում ծառայել Իրեն, պետք է իմանանք, որ դա լիովին Աստծու գերիշխանության հետ է կապված՝ Հռմ 9:15-16, Եբր 4:16.
ա. Եթե ճանաչենք Աստծու գերիշխանությունը, կգոհաբանենք Նրան Իր ողորմության համար՝ գիտակցելով, որ մենք Նրա գերիշխան ողորմության տակ ենք՝ Հռմ 9:15:
բ. «Գերիշխան ողորմություն» արտահայտությունը ցույց է տալիս, որ Աստծու ողորմությունը բացարձակապես Աստծու գերիշխանության հետ է կապված. ողորմության անոթ լինելը մեր ընտրության արդյունքը չէ. այն սկիզբ է առնում Աստծու գերիշխանությունից՝ խ. 18:
գ. Միակ բանը, որ կարող ենք ասել մեր հանդեպ Աստծու ողորմությունը բացատրելու համար, այն է, որ Նա Իր գերիշխանությամբ որոշել է մեր հանդեպ ողորմած լինել՝ խխ. 15-16, 23:

3. Աստծու գերիշխան ողորմությամբ մեր սրտերը հակվում են դեպի Նա. մեր հանդեպ Նրա ողորմության շնորհիվ մենք օր օրի փնտրում ենք Նրան՝ Երմ 29:12-13, Երկ Օր 4:29, Եսյ 55:6, Սղմ 27:8, 105:4, 119:2, Եբր 11:6:

4. Որքան շատ տեսնենք, որ մեզ առնչվող ամեն ինչ կապված է Աստծու ողորմության հետ, այնքան Տիրոջ առջև ավելի շատ պատասխանատվություն կկրենք. սակայն նույնիսկ պատասխանատվություն կրելու մեր պատրաստակամությունն Աստծու ողորմությունից է:

5. Աստված Իր վերականգնման առնչությամբ ողորմում է նրան, ում ողորմում է:

Գ. Հռմ 9-ը բացահայտում է այն սկզբունքը, որ ամեն բան կախված է Աստծու ողորմությունից՝ խխ. 15-16.

1. Պողոս առաքյալն այս սկզբունքը կիրառում է իսրայելացիների հանդեպ՝ ցույց տալով, որ նրանց հետ ողջ պատահածը Աստծու ողորմությունն էր՝ խխ. 16, 23:

2. Մենք պետք է առնվազն մեկ անգամ տեսնենք Աստծու ողորմությունը և պարզորոշ կերպով հպվենք Նրա ողորմությանը՝ Եփս 2:4, Մտթ 9:13.
ա. Այս բանի առնչությամբ մեր աչքերն առնվազն մեկ անգամ պետք է բացվեն. մենք պետք է առնվազն մեկ անգամ տեսնենք, որ ամեն ինչ կախված է Աստծու ողորմությունից:
բ. Անկախ այն բանից՝ այս ամենը միանգամից ենք տեսնում, թե որևէ գործընթացի միջոցով ենք գիտակցում, այն րոպեին, երբ հպվում ենք այս իրողությանը, մենք ոչ թե զգացումի ենք հպվում, այլ փաստի. այս փաստն այն է, որ ամեն ինչ կախված է Աստծու ողորմությունից:

Դ. «Ուստի համարձակությամբ մոտենանք շնորհքի գահին, որպեսզի ողորմություն ստանանք և շնորհք գտնենք յուրաժամ օգնության համար»՝ Եբր 4:16, հմմտ խ. 15, Ղկս 15:20-24:

Ե. Հայր Աստված Իր գերիշխանությամբ ողորմացել է մեզ. հետևաբար մենք պետք է փառաբանենք ու երկրպագենք Նրան Իր գերիշխան ողորմության համար.

1. «Ողորմությունդ ենք վայելում, Հա՛յր, թարմ է այն ու միշտ նոր, Առավոտ վաղ մեզ ողողում, Թարմացնում է ինչպես ցող: Օ՜, որքան ենք վայելում այն Մենք սրտով Քեզ գովերգող, Մենք սրտով Քեզ գովերգող»՝ Օրհներգ 22, 5-րդ տուն:
2. «Ողորմությունդ սիրով ու շնորհքով Տվեցիր մեզ, Քո ողորմությամբ Քեզ հետ կլինենք Մենք մշտապես: Կերկրպագենք մենք Քեզ հավիտյան Քո գութի համար, Քո ողորմության»՝ Օրհներգ 21, 3-րդ տուն:

Զ. Մենք ստեղծվել ենք՝ պատվի համար ողորմության անոթներ լինելու, որպեսզի պարունակենք Քրիստոսին՝ որպես պատվի Աստծու (Բ Տմթ 2:20-21, Հռմ 9:21), որպեսզի Աստծուն և մարդուն պատվենք (Դտվ 9:9).

1. Պատվի անոթ լինելը մեր ընտրությունը չէ. այն սկիզբ է առնում Աստծու գերիշխանությունից՝ Հռմ 9:21:
2. Հավատացյալները պատվի անոթ են, և նրանց վերածննդի շնորհիվ Քրիստոսը նրանց գանձն է դարձել՝ Բ Կրթ 4:6-7:
3. Հավատացյալներն այն բանի շնորհիվ են պատվի անոթ, որ իրենց մաքրում են անպատվության անոթներից՝ Բ Տմթ 2:20-21:
4. Պատվի անոթները նրանք են, ովքեր պատվում են Աստծուն՝ Հոգով ապրելով ու քայլելով (Գղտ 5:16, 25), և ովքեր պատվում են մարդկանց՝ նրանց սպասավորելով Հոգուն (Բ Կրթ 3:6, 8):

Է. Մենք ստեղծվել ենք, որպեսզի լինենք փառքի համար ողորմության անոթներ՝ Քրիստոսին՝ որպես փառքի Աստծուն պարունակելու համար՝ Երմ 2:11, Գրծ 7:2, Եփս 1:17, Ա Կրթ 2:8, Ա Պտ 4:14, Կղս 2:9, Սղմ 24:7-10.

1. Փառքի Աստված Ինքն է՝ արտահայտված և հայտնի դարձված՝ Երմ 52:11, Գրծ 7:2, Եփս 1:17, Ա Կրթ 2:8, Ա Պտ 4:14, Կղս 2:9, Սղմ 24:7-10:
2. Տերն ի վիճակի էր Հորն ասելու. «Ես Քեզ երկրի վրա փառավորեցի՝ ավարտելով այն գործը, որը Դու Ինձ տվել ես անելու» (Հվի 17:4). սա նշանակում է, որ մինչ Տերն ապրում էր երկրի վրա, Նա Հորն էր հայտնի դարձնում և արտահայտում:
3. Քրիստոսի աստվածայնության փառքի ազատագրումը (Ղկս 12:49-50) Հոր կողմից աստվածային փառքով Նրա փառավորվելն էր (Հվի 12:23-24) Նրա հարության ժամանակ (Գրծ 3:13) Նրա մահվան միջոցով. Քրիստոսն Իր փառավորման մեջ որպես վերջին Ադամը դարձավ կենդանարար Հոգին Իր աստվածային բաշխման համար (Հվի 7:39, Ղկս 24:26, 46, Ա Կրթ 15:45բ, Բ Կրթ 3:6):
4. Որպես պատվի և փառքի համար անոթներ՝ մենք Աստծու կողմից պատրաստվել ենք փառքի համար, որ տեղի կունենա փառավորման՝ Աստծու լիակատար փրկության վերջին քայլի միջոցով՝ Հռմ 8:21, 23, 29-30, Փլպ 3:21:
5. Աստված Իր գերիշխանությամբ մեզ ստեղծեց, ձևավորեց և նույնիսկ պատրաստեց Իր փառքի համար՝ Եսյ 43:7, Հռմ 9:23.

ա. Մենք Իր գերիշխանությամբ նախասահմանվեցինք Իր փառավոր արտահայտության և դրսևորման համար լինելու Իր պարունակիչները:
բ. Սա Աստծուն՝ մեր պիտանի լինելու գագաթնակետն է՝ Աստծու ընտրության նպատակը՝ Նրա գերիշխանության համաձայն՝ խխ. 11, 18:
գ. Աստծու փառավորումը մեր ծառայության նպատակն է՝ 7:6, 11:36:
դ. Բարձրագույն ծառայությունը, որ կարող ենք Աստծուն մատուցել, Նրան Իր փառքի համար արտահայտելն է՝ Ա Կրթ 6:20, 10:31, Հռմ 6:4:
ե. Աստծու փառքը ներդրվում է եկեղեցու մեջ, և Նա արտահայտվում է եկեղեցում. ուստի Աստծուն փառք է լինում եկեղեցում. այսինքն՝ Աստված փառավորվում է եկեղեցում՝ Եփս 3:16, 20-21:

6. Մեր՝ հողե անոթների ներսում բնակվում է այս գանձը՝ Քրիստոսը՝ որպես Աստծու փառքը (Բ Կրթ 4:7). «այս գանձը» (խ. 7), որ բնակվում է մեր մեջ, «Հիսուս Քրիստոսի երես»-ն է (խ. 6)՝ Քրիստոսի ներկայությունը, «Քրիստոսի անձ»-ը (2:10):
7. Երբ մեր սիրտը Տիրոջն ենք դարձնում, հայում ենք Տեր Հոգուն՝ որպես մեր հոգում եղող Քրիստոսի ներկայության, և «նույն պատկերին ենք փոխակերպվում փառքից փառք, ինչպես որ Տեր Հոգուց»՝ 3:16-18, հմմտ Բ Տմթ 4:22:
8. Տիրոջ փառքին հայել նշանակում է Տիրոջն անձամբ տեսնել, Տիրոջ փառքն անդրադարձնել նշանակում է ուրիշներին մեր միջոցով Նրան տեսնել տալ՝ Եսյ 60:1, 5:

© 2020 Living Stream Ministry